

Ինչ է սուրդոթարգմանությունը

Սուրդոթարգմանությունն օգտագործվում է խուլ կամ թույլ լսող մարդկանց հետ հաղորդակցվելու, ձայնային ինֆորմացիան նրանց հաղորդելու համար: Սուրդոթարգմանությունը լայնորեն օգտագործվում է հեռուստատեսությունում՝ հաղորդումների, ֆիլմերի ցուցադրության ժամանակ: Շատ հազվադեպ, սակայն պատահում են նաև համերգների սուրդոթարգմանություններ:

Սուրդոթարգմանիչներն օգտագործում են ժեստերի լեզուն կամ մատնախոսությունը: Ժեստերի լեզուն համընդհանուր է, սակայն կախված տվյալ լեզվի այբուբենից ու բառերի տարբերությունից՝ որոշ ժեստեր կարող են տարբեր լինել: Ժեստերի լեզուն անկախ, տեխնածին լեզու է, որը մատների շարժումները համադրում է միմիկայի, շուրթերի շարժումների հետ: Ժեստերի լեզվով խոսելիս մատների յուրաքանչյուր շարժում բառ, բառակապակցություն, երբեմն էլ մի ամբողջ միտք կարող է նշանակել:

Մատնախոսության ժամանակ մատների յուրաքանչյուր շարժում ընդամենը մեկ տառ է նշանակում: Այստեղ ամեն ինչ ավելի հստակ է և ընդամենը մեկ սխալը կարող է փոխել բառի իմաստը: Թարգմանիչը պետք է սահուն շարժի մատները, քանի որ դանդաղ ու ընդհատումներով շարժումները կոպիտ սխալ են համարվում: Մատնախոսության ժամանակ, որպես կանոն, աջ ձեռքն են օգտագործում: Հաղորդակցման այս տեսակը ևս, կախված լեզվից, յուրաքանչյուր երկրում տարբեր է: Մատնախոսությունը, ի տարբերություն ժեստերի լեզվի, ավելի բարդ է, քիչ է օգտագործվում ու ավելի երկար ժամանակ է պահանջում թարգմանելու համար:

Որոշ իմաստով սուրդոթարգմանություն կարող է նշանակել նաև հաղորդումների կամ ֆիլմերի տեքստային մեկնաբանությունը:

Ով է սուրդոթարգմանիչը

Սուրդոթարգմանիչը հատուկ մասնագետ է, ով խուլերին կամ թույլ լսողներին աշխարհին կապող յուրօրինակ օղակ է: Նա այն մարդն է, ով ապահովում է մարդկանց այդ խմբի տեղեկացված լինելու իրավունքը: Սուրդոթարգմանիչը, բացի մատների շարժումներից, պետք է կարողանա նաև հմտորեն օգտագործել միմիկան, հաղորդակցվել շրթունքները շարժելով: Այս մասնագետները պետք է լինեն համբերատար, ըմբռնող և հարգանքով վերաբերվեն իրենց կարիքն ունեցող մարդկանց:

Մեր հանրապետությունում նման մասնագետներ է պատրաստում ԻՄ Արթվյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը:

Անի Պետրոսյան